

Աշոտ Սմբատյանը (ծնվ. 30.04.1969թ. Հայաստանում) դպրոցն ավարտելուց հետո ուսանել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում: Որպես Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) կրթաթոշակառու՝ ուսանել է Դրեզդենի և Լայպցիգի համալսարաններում: 1993-96թթ. նա տնտեսագիտություն է ուսանել Բեռլինի Հումբոլտի անվան համալսարանում: «Ընդունակ երեխաների գերմանական կազմակերպությունում» դասավանդելուց հետո նա 1999թ. աշխատանքի է ընդունվել Բոննում ՀՀ դեսպանությունում՝ որպես դեսպանի օգնական: Նա զբաղեցրել է տարբեր պաշտոններ ԳԴՀ-ում ՀՀ դեսպանությունում և ՀՀ արտաքին գործերի նախարարությունում: 2012թ. նա Գերմանիայի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիայում վերապատրաստման կրթություն է ստացել: 2015թ. մայիսին նշանակվել է Հայաստանի Հանրապետության դեսպան Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: Ունի արտակարգ դեսպանորդի և լիազոր նախարարի դիվանագիտական աստիճան: 2018թ. դեկտեմբերի 13-ից համատեղության կարգով հանդիսանում է նաև Լիխտենշտայնի Իշխանապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպան (նստավայրը՝ Բեռլին):